

**4.2. Զբոսաշրջություն**

**4.2.1. Միջազգային զբոսաշրջություն**

**Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2019-2020թթ. հունվար-հունիսին**

մարդ

	2019թ. հունվար-հունիս	2020թ. հունվար-հունիս
<b>Ժամանողներ<sup>1</sup></b>		
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	770 055	311 264*

**Ծանուցում.**

2020թ. ապրիլ-հունիսին ՀՀ սահմանային անցման կետերում ՀՀ ազգային անվտանգության ծառայության ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՄԷԿՏ) համակարգով արձանագրված ժամանողները և մեկնողները չեն կարող որակվել որպես զբոսաշրջիկ, քանզի ըստ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի № 298-Ն որոշման (ինչպես նաև մինչ այդ ընդունված՝ ՀՀ կառավարության 2020թ. մարտի 13-ի «Վրաստանի հետ հաղորդակցությունը ժամանակավորապես սահմանափակելու մասին» № 280-Ն որոշմամբ) հավելվածի 2-րդ կետի, անցակետով թույլատրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող նրանց ընտանիքի անդամների, Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող անձանց մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք: Անցակետով արգելվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձանց մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք, որոնք Հայաստանի Հանրապետության տարածք են մուտք գործում պարետի որոշմամբ սահմանված համաճարակաբանական լարված իրավիճակ ունեցող երկրների (տարածքների) ցանկում ներառված երկրներից (տարածքներից) կամ մուտք գործելիս նախորդող տասնչորս օրվա ընթացքում գտնվել են այդ երկրներում (տարածքներում), բացառությամբ՝

- 1) դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և նրանց ընտանիքների անդամների.
- 2) այն դեպքերի, երբ պարետի որոշմամբ, հաշվի առնելով այդ երկրներում (տարածքներում) համաճարակային իրադրության իրավիճակը, թույլատրվում է սույն կետով նախատեսված երկրների (տարածքների) ցանկում ներառված երկրներից (տարածքներից) անձանց մուտք գործելը.
- 3) պարետի որոշմամբ այլ դեպքերի:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության և Պարետի վերը հիշատակված որոշումներով նշված անձինք հիմնականում ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցողներն են, ՀՀ քաղաքացիների ՀՀ քաղաքացի չհանդիսացող ընտանիքի անդամները, դիվանագետները, բեռնափոխադրող վարորդները, գնացքավարները, նրանց օգնականները, օդանավերի անձնակազմերը:

Մեկնողների մասով հավելվում են նաև այլ՝ գրեթե բոլոր երկրների կողմից սահմանված սահմանափակումները:

<sup>1</sup> Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքների հիման վրա ձևավորված գործակիցները:

<sup>2</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) ներքին զբոսաշրջիկ է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

\*Ցուցանիշը ձևավորվել է միայն 2020թ. հունվար-մարտ ժամանակաշրջանի տվյալներով: 2020թ. ապրիլ-հունիս ժամանակաշրջանում ըստ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի № 298-Ն որոշման ուժով ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելություններ չեն արձանագրվել: